ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կոմունիստական շինարարության ներկա էտապում գնալով ավելի ու ավելի է մեծանում գիտության դերն ու նշանակությունը։ Պարտիան գիտության մարդկանց առջև շարունակ նոր, հրատապ խնդիրներ է դնում, որոնք լուծում են պահանջում։ Այդ կարևորագույն խնդիրների մասին հանգամանորեն խոսվեց հուլիսի 25-ին, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցած գիտական աշխատողների ռեսպուբլիկական խորհրդակցությունում, որը հրավիրել էր Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը։

Խորհրդակցության նախագահությունում էին ընկ. ընկ. Ե. Ասցատրյանը, Հովհ. Բաղդասարյանը, Յա. Զարոբյանը, Գ. Հարությունյանը, Մ. Մելքոնյանը, Ս. Մովսիսյանը, Բ. Մուրադյանը, Գ. Տեր-Ղազարյանը, Ա. Քոչինյանը, Ս. Առաքելյանը, *ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի նախագահության անդամներ, պարտիական ու սովետական ղեկավար աշխատողներ։*

Խորհրդակցությունը ներածական խոսքով բացեց ՀԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Բաղդասարյանը։ *Նա ասաց.*

— Սովետական ամբողջ ժողովուրդը մեծ ոգևորությամբ պատրաստվում է հարազատ Կոմունիստական պարտիայի հերթական XXII համագումարին։ Պատմական այդ մեծ իրադարձության նախօրյակին յուրաքանչյուր սովետական մարդ, յուրաքանչյուր սովետական հայրենասեր որոշում է իր տեղն ու դերը այն պայքարում, համաժողովրդական այն մրցության մեջ, որ ծավալվել են մեր բովանդակ երկրում պարտիայի համագումարը արժանավայել դիմավորելու համար։

Հրավիրելով այս խորհրդակցությունը, Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը նպատակ ունի նոր, մեծ խնդիրների լույսի տակ, հանրագումարի բերել մեր ռեսպուբլիկայի գիտնականների աշխատանքը, նշել նոր ուղիներ գիտության հետագա զարգացման համար։

Խորհրդակցության մասնակիցները մեծ խանդավառությամբ պատվավոր նախագահություն ընտրեցին ՍՄԿՊ Կենտկոմի նախագահությունը ընկեր Ն. Ս. Խրուշչովի գլխավորությամբ։

Այնուհետև «Գիտական աշխատողների համամիութենական խորհրդակցության արդյունքները և Հայաստանի գիտնականների խնդիրները՝ կապված ՍՄԿՊ XXII համագումարի հրավիրման հետ» զեկուցումով հանդես եկավ ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

— Սովետական ժողովուրդը, Կոմունիստական պարտիան և կառավարությունը,— ասաց զեկուցողը,— մեծ ուշադրություն են նվիրում գիտությանը, որովհետև մեր սոցիալիստական հասարակարգի զարգացումը հիմնվում է գիտության վրա, որովհետև առանց գիտության հնարավոր չէ արտադրական ուժերի առաջընթացը։ Առանձնապես աճել է գիտության դերը ժամանակակից կյանքում։

Ընկեր Համբարձումյանը խոսում է հետպատերազմյան տարիներին ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման, հրթիռային տեխնիկայի զարգացման արհեստական արբանյակների և կոսմիկական հրթիռների ստեղծման, հաշվիչ էլեկտրոնային մեքենաների, ավտոմատ ղեկավարման սկզբունքները արդյունաբերության մեջ կիրառելու, քիմիական արհեստական նյութերի ստեղծման, նոր դեղանյութերի սինթեզման, օդային տրանսպորտի զարգացման և այլ ասպարեզներում սովետական գիտության մեծ նվաճումների մասին։

Սովետական գիտության խոշորագույն նվաճումն էր ապրիլի 12-ին Յու. Գագարինի թռիչքը «Վոստոկ» տիեզերանավով։

Գիտության հետագա զարգացման համար բացառիկ խոշոր նշանակություն ունի ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումը «Երկրում գիտահետազոտական աշխատանքների կոորդինացումը և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գործունեությունը բարելավելու միջոցառումների մասին»։ Այդ որոշումը մեր աշխատանքների մարտական ծրագիրն է, որի կենսագործման հարցերին էր նվիրված գիտական աշխատողների Մոսկվայի համամիութենական խորհրդակցությունը։

Խորհրդակցությունում հատուկ սրությամբ արծարծվեցին գիտական հիմնարկների միջև գիտական պրոբլեմների ավելի խելացի կոորդինացման հիմնական ուժերը կարևորագույն պրոբլեմների վրա կենտրոնացնելու հարցերը։ Գիտնականներից պահանջվեց, որ նրանք իրենց աշխատանքի որոնումային փուլից մինչև ներդրումը գործը շարունակեն անընդհատ, արագ տեմպերով, ապահովեն գիտության առաջատար դերը արտադրության նկատմամբ, գիտությունը մոտեցնեն կյանքին։

Խոսելով Կրեմլում տեղի ունեցած ընդունելության մասին, ընկ. Համբարձումյանն ասաց, որ այդ ընդունելության ժամանակ գիտնականներին շատ օգտակար խորհուրդներ տվեց ընկ. Ն. Ս. Խրուշչովը։

Այնուհետև նա անդրադարձավ ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի գործունեությանը, գիտնականների ձեռք բերած նվաճումներին։ Հայաստանում գործում են գիտահետազոտական 80 ինստիտուտներ, որտեղ բեղմնավոր աշխատանք են կատարում հազարավոր գիտական աշխատողներ։

Մեզ համար կարևոր նշանակություն ունեցավ այս տարվա մայիսի 8-ին Բյուրականում ընկեր Ն. Ս. Խրուշչովի՝ Հայաստանի գիտական աշխատողների հետ ունեցած զրույցը։ Նա լսեց մեր գիտնականներին, հարց ու փորձ արեց և խորհուրդներ տվեց։ Ընկեր Խրուշչովը բարձր գնահատեց մեր գիտնականների աշխատանքը։ Այդ ուշադրությունը մեզ շատ է պարտավորեցնում։

Ընկ. Վ. Համբարձումյանը կանգ առավ այն թերությունների վրա, որոնք խանգարում են գիտության հետագա առաջընթացին։ Առաջին և ամենախոշոր թերությունը այն է, որ ամենուրեք և միշտ չէ, որ գիտնականները լարված են աշխատում, որի հետևանքով նրանց պրոդուկցիան անբավարար է իր որակով և քանակով։ Միշտ չէ, որ գիտական աշխատողները լի են սկսած աշխատանքը մինչև վերջ հասցնելու, գիտության նվաճումները պրակտիկայում ներդնելու հետ կապված դժվարությունները հաղթահարելու պատրաստակամությամբ։ Հաճախ ցածր է հետազոտությունների մակարդակը։ Գիտնականների շարքերը դանդաղ են համալրվում նոր, ընդունակ կադրերով։ Գիտական կադրերի պատրաստումը վատ է դրված բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Թույլ է մեր աշխատանքի կոորդինացումը Միության այլ գիտական հաս-

տատությունների հետ, իսկ երբեմն նաև Հայաստանի հիմնարկների հետ։ Գիտնականների մի մասի մեջ իրեն զդալ է տալիս եսասիրությունը, կան մարդիկ, որոնք խուսափում են կոլեկտիվ աշխատանքից։

Մեր գիտնականների խնդիրն է լայնորեն զարգացնել մաթեմատիկան, աստղագիտությունը, մասնակցել տիեզերքի ուսումնասիրությանը՝ նորագույն միջոցներով։ Կարևոր նշանակություն ունեն կիրառական մաթեմատիկան և հաշվողական տեխնիկան։ Հատուկ ուշադրության են արժանի մեխանիկան, ֆիզիկան, քիմիան, ռադիոտեխնիկան և էլեկտրատեխնիկան։ Պետք է ավելի լավ ուսումնասիրել ռեսպուբլիկայի ընդերքը, բարձրացնել գեոֆիզիկայի դերը այդ գործում։

Զեկուցողը գիտական աշխատողների ուշադրությունն է հրավիրում գունավոր մետալուրգիայի, էլեկտրատեխնիկայի, բժշկության զարգացման հարցերի վրա։

Հասարակական գիտությունների բնագավառում կարևոր անելիքներ ունի տնտեսագիտությունը, որը պետք է լուծի այնպիսի խնդիրներ, որոնք բխեն Հայաստանի ժողովրդական տնտեսության շահերից, բայց ունենան համամիութենական նշանակություն։ Պետք է լուրջ ուշադրություն դարձնել նաև լեզվաբանության և լեզվաշինարարության հարցերին։

— Մոտենում է պարտիայի XXII համագումարի հրավիրման օրը,— ասաց վերջում Վ. Համբարձումյանը։— Մեր մի շարք գիտնականներ և գիտական հիմնարկներ վերցրել են լուրջ պարտավորություններ՝ համագումարը արժանավայել դիմավորելու համար։ Հուսով ենք, որ նրանք կկատարեն իրենց խոստումը։

Զեկուցումից հետո սկսվեց մտքերի լայն փոխանակություն, որին մասնակցեցին գիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչներ։

Առաջինը ձայն է ստանում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նուրբ օրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր, ռեսպուբլիկայի ակադեմիայի ակադեմիկոս Ա. Մնջոյանը։

— Գիտնականների համամիութենական խորհրդակցության առաջադրած նոր պահանջներից ելնելով,— ասաց նա,— անհրաժեշտ է ամենից առաջ արմատապես բարելավել գիտական հաստատությունների գործունեության կոորդինացումը։ Այդ հարցը մինչև այժմ մեզ մոտ ձևական բնույթ է կրել։ Գիտական հիմնարկները իրենց ընդհանուր աշխատանքների միայն մի աննշան մասով են կապված եղել միմյանց հետ, որի պատճառով հաճախ գիտական նույն պրոբլեմը ուսումնասիրության առարկա է եղել տարբեր կոլեկտիվների համար։ Դա հետևանք է այն բանի, որ ռեսպուբլիկայում չկա միասնական կոորդինացիոն կենտրոն։ Ես կարծում եմ, որ ներկայումս խիստ անհրաժեշտ է այդպիսի կենտրոնի ստեղծումը։ Դա իրոք հնարավորություն կտա լրջորեն զբաղվելու առանձին գիտական հիմնարկների գործունեության կոնկրետ ուղղությունների ճշգրտմամբ ու նրանց միջև աշխատանքների խելացի բաժանումով։

— Վերջին մեկ և կես տարում,— ասաց ընկ. Մնջոյանը,— ակադեմիայի սիստեմում կազմակերպված նոր գիտահետազոտական ինստիտուտներից և ոչ մեկը էքսպերիմենտալ բազա չունի։ Վատ է գործը նաև եղած բազաներում, ուր չկան աշխատանքի անհրաժեշտ պայմաններ։ Նոր բազաների կառուցումը տարիներով ձգձգվում է Շինարարության մինիստրության մեղքով։

Վերջում հռետորը կանգ առավ օրգանական սինթեզի զարգացման անհրա-

ժեշտության վրա, որպես քիմիայի կարևորագույն ճյուղի։ Զարորակ ուռուցքների, սրտանոթային, վիրուսային և այլ հիվանդությունների դեմ օրգանական սինթեզի ճանապարհով նոր պրեպարատների ստեղծումը նա համարեց ռեսպուբլիկայի քիմիկոսների առաջնահերթ խնդիրը։

Զայնը տրվում է Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Մանվելյանին։

Հայաստանում գիտության հետագա զարգացման հարցը,— ասում է նա,— պետք է ելնի ժողովրդական տնտեսության հարաճուն վերելքի պահանջները բավարարելու սկզբունքից։ Մենք պետք է կարողանանք մեր ակադեմիայի և ռեսպուբլիկայի զանազան ինստիտուտների գիտական աշխատանքները ուղղել այդ նպատակին, այժմեական պրոբլեմների լուծման նպատակին։

Հայաստանի քիմիկոսները մեծ դեր ունեն կատարելու քիմիական գիտության և քիմիական արդյունաբերության առաջընթացի գործում։ Ներկայումս մենք ունենք բնական գազ, որից մշակվում են զանազան պոլիմերներ և սինթետիկ նյութեր, որոնք խոշոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության բազմաթիվ բնագավառների հետագա զարգացման համար։ Մեր կարծիքով բնական գազից տարբեր տեսակի պոլիմերների և սինթետիկ նյութերի ստացումը չպետք է կրի ինքնանպատակ բնույթ, այլ պետք է ուղղված լինի քիմիական արդյունաբերության և արտադրության մյուս ճյուղերի զարգացման նպատակին։

Կարևոր նշանակություն ունի ապակյա պլաստների արտադրության ստեղծումն ու զարգացումը, ինչպես նաև քարերի կոմպլեքսային մշակումը։ Քարերից կարելի է ստանալ շատ էժան և պարզ նյութեր։ Կոմպլեքսային մշակման ճանապարհով մեկ բարդ սիլիկատային լեռնապարից կարելի է ստանալ ութից ինը պարզ նյութեր։

Այնուհետև ընկ. Մ. Մանվելյանը խոսում է ռեսպուբլիկայում անօրգանական քիմիայի զարգացման հեռանկարների մասին։ Անհրաժեշտ է մտածել աղի անսպառ պաշարները խելացիորեն օգտագործելու, դրանց բազայի վրա սոդայի անհապաղ արտադրություն կազմակերպելու մասին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Ալեքսեևսկին իր ելույթում պատմեց էլեկտրամեխանիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական ֆիլիալի գործունեության մասին։

— Ինստիտուտի կոլեկտիվը,— ասաց նա,— ծավալուն աշխատանք է կատարում էլեկտրական մեքենաների՝ տրանսֆորմատորների, գեներատորների, տարբեր ապարատների ու սարքավորումների նոր կոնստրուկցիաների ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև զբաղվում է արտադրական պրոցեսների կոմպլեքսային ավտոմատացման ու մեքենայացման խնդիրներով։

Կենսագործելով ՍՄԿՊ XXII համագումարի պատվին ստանձնած պարտավորությունները, ֆիլիալի կոլեկտիվը Հայաստանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների հետ ստեղծել է մի շարք նոր տիպի մեքենաներ։ Մենք պետք է յուրացնենք քսան նոր սարքավորումների արտադրությունը։ Այժմ բոլոր ջանքերը գործադրում ենք դրանցից տասնվեցի արտադրությունը մինչև հարազատ պարտիայի համագումարի բացումը յուրացնելու համար։ Բացի այդ, մինչև հոկտեմբերի 17-ը շահագործման կհանձնվի տրանսֆորմատորների փորձարկման կայանը։

Գիտական աշխատողների համամիութենական խորհրդակցությունը քննարկեց մի շարք լուրջ հարցեր՝ կապված գիտահետազոտական կազմակերպությունների աշխատանքների հետագա կոորդինացման, նրանց գործունեության բարելավման հետ, բացահայտեց մի շարք թերություններ, որոնք խանգարում են գիտությունը արտադրությանն է՛լ ավելի մոտեցնելու գործին։ Ներկայումս խնդիր է դրված, որ ճյուղային գիտահետազոտական կազմակերպությունները տարեկան թեմատիկ պլանի 95 տոկոսի ծավալով անցնեն տնտեսական աշխատանքի։ Այդ միջոցառումը հիմնականում ուղղված է գիտությունը արտադրությանը մոտեցնելու, գիտական աշխատանքների արդյունքների պրակտիկ էֆեկտիվությունը բարձրացնելու նպատակին։

Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Կարինյանը իր ելույթում պատմեց գիտնականների համամիութենական խորհրդակցությունում իր ստացած տպավորությունները, կանգ առավ Հայաստանում հասարակական գիտությունների հետագա զարգացման և այդ բնագավառի աշխատողների առաջնահերթ խնդիրների վրա։

Երևանի Բժշկական ինստիտուտի ռեկտոր, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ս. Դալաստյանը խոսեց մի շարք պրոֆեսիոնալ հիվանդությունների դեմ պայքարելու անհրաժեշտության մասին։ Նա առաջարկեց ռեսպուբլիկայում ստեղծել բժշկական գիտահետազոտական նոր հաստատություններ։

Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրության Հողագիտության և ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր Հ. Պետրոսյանն ասաց, որ իր.ենց մշակած միջոցառումները հնարավորություն են տալիս Արարատյան դաշտում երեսուն հազար հեկտար աղակալած հողեր վերածել ծաղկուն այգիների։

Խորհրդակցությունում ընդարձակ ճառով հանդես եկավ Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանը։

Վերջում ընդունվեց դիմում՝ ուղղված Սովետական Հայաստանի գիտության բոլոր աշխատողներին։

(ՀՀԳ)